ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/17Շ-1

ք. Երևան «31» 08 2022 թ.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը», ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մավշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Մարգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Մ10, Սևան-Մարտունի-Գետափ Կմ 123+500 (Գետափ բնակավայրի դպրոցի մոտ) վերգետնյա հետիոտնային անցման կառուցման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 135 օր, բայց ոչ ուշ, քան ֆինանսական միջոցներ նախատեսվելու տարվա նոյեմբերի 30-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 **Աշխատանքների առնվազն 100 տոկոսը** կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարին** Եթե երաշխիքային ժամկետի

ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **54 551 190** (հիսունչորս միլիոն հինգ հարյուր հիսունմեկ հազար մեկ հարյուր իննսուն) ՀՀ դրամ, որից **9 091 865** (ինը միլիոն իննսունմեկ հազար ութ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն

պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	<Մավշին> ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Զառիթափ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	ՀՎՀՀ՝ 08911644
ՀՀ 900011025815	ՀՀ 11813008834700
ՀՎՀՀ 02815457	ԱյԴի բանկ ՓԲԸ
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝ Մ. Մարգարյան
Ա. Երիցյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«31» «08» 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/17Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՉԱՓԱԲԱԺԻՆ 2
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ
Մ10, Սևան-Մարտունի-Գետափ Կմ 123+500 (Գետափ բնակավայրի դպրոցի մոտ) վերգետնյա հետիոտնային անցման կառուցման

ՀՀ հազ. Դրամ

NN	Աշխատանքների անվանումը	չափման միավոր	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	Սխեման	մ	1x14.5		
	Երկարությունը	մ	14,5		
	Բարձրությունը	մ	6,0		
	Գաբարիտը	մ	Г-2.54		
	I. Նախապատրաստական աշխատանքներ				
1	Կառուցման աշխատանքներ իրականացնելու ընթացքում տրանսպորտային միջոցների երթևեկությունը կարգավորող ճան. նշանների պատրաստում և տեղադրում՝ հետագա կազմատումով և վերադարձ 50%: Նախազգուշացնող–1.20.2(1 հատ).1.20.3(1 հատ). 1.25(5 հատ): Առավելության-2.6 (1 հատ). 2.7 (1 հատ): Արգելող – 3.1 (1 հատ). 3.20 (2 հատ). 3.24 (6 հատ). 3.31 (2 հատ): Թելադրող – 4.2.2 (1 հատ): Լրացուցիչ տեղեկատվության - 8.1.1 (1 հատ):	հատ	22	70 000	1 540 000
2	Որպես հենարան աշտարակի տիպի լաստակի իրականացում կլոր և սղոցված անտառանյութից հետագա կազմատումով և վերադարձ 100%: ա) տապաստներ չորսուներից կտր. 300x200մմ. L1=3.7 մ; բ) կանգնակներ կլոր անտառանյութից d=300մմ. L1=4.9 մ; գ) հորիզոնական կապեր կիսակլոր անտառանյութից d/2=240/2 մմ. L1միջ.=2.8 մ; դ) թեք կապեր կիսակլոր անտառանյութից d/2=200/2 մմ. L1.=3.0 մ; ե) սղոցված չորսուներից գլխադիրներ կտր. 300x200մմ. L1=3.7 մ; զ) հենարանային չորուներ (սեպ) կտր. 100x100մմ. L1=1.0 մ; է) քառակուսի գլխիկով հեղույսներ և վեցանիստ մանեկներով. d=22 մմ. L1=500 մմ. P1=0.268+1.912=2.18 կգ; ը) պողպատե երկաթակապեր -d=16 մմ. L1=400 մմ. P1=0.74կգ; թ) պողպատե մեխեր d=5 մմ. L1=150 մմ:	հատ	1	1 300 000	1 300 000
				Ընդամենը I	**2 840 000**

	II. Հենարաններ N1				
1	Հիմքերի համար փոսորակների փորման հողային աշխատանքներ 0.65մ3 շերեփ տար. էքսկավատորով. գրունտի բարձում ավտոինքնաթափեր (19%) և տեղափոխում լցակույտ 7 կմ հեռավորության վրա: 6Գ-IV	մ³	307,7	6 000	1 846 200
2	Փոսորակների փորման հողային աշխատանքներ ձեռքով: 6Գ-IV	մ³	34,2	8 000	273 600
3	Խճային նախապատրաստում:	մ³	9,52	8 000	76 160
4	Հիմքերի միաձույլ ե/բետոն. ա.պ. - 37.13 կգ/մ3: AI Ø8 P=0.0183 տ; A500C Ø12 P=1.642 տ:	մ³	44,72	110 000	4 919 200
5	Կանգնակների միաձույլ ե/բետոն. ա.պ. - 378.60 կգ/մ3: AI Ø10 P=1.0855 տ; A500C Ø25 P=2.1629 տ:	մ³	8,58	260000	2230800
6	Ֆերմատակերի միաձույլ ե/բետոն. ա.պ. – 176.3 կգ/մ3; AI Ø8 P=0.01842 տ; Ø10 P=0.11532 տ; A500C Ø25 P=0.1621 տ. Ø22 P=0.359 տ. Ø16 P=0.045 տ. Ø12 P=0.1365 տ. Ø10 P=0.0932 տ. Ø8 P=0.0295 տ.	մ³	5,9	170000	1003000
7	Գրունտի հետ շփվող կոնստրուկցիաների մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում:	մ²	72,8	5000	364000
8	Փոսորակների հետլիցք բուլդոզերով: Գրունտի տեղադրումը շերտերով ջրի լցաբախշումով և խտացում պնևմատոփանով:	մ³	247,1	3500	864850
9	Փոսորակների հետլիցք ձեռքով: Գրունտի տեղադրումը շերտերով ջրի լցաբախշումով և խտացում պնևմատոփանով:	մ³	27,5	5500	151250
10	Ֆերմատակերում ներդիր դետալների պատրաստում և տեղադրում; -10x240 մմ. L1=340մմ. n=4 հատ. F=0.3264 մ2. P=0.026 տ; Ø16 AIII. L1=130 մմ. n=16 հատ. P=0.0033 տ:	տ	0,0293	500000	14650
				Ընդամենը II	11743710
	III. Հենարաններ N2				
1	Հիմքերի համար փոսորակների փորման հողային աշխատանքներ 0.65մ3 շերեփ տար. էքսկավատորով. գրունտի բարձում ավտոինքնաթափեր (12%) և տեղափոխում լցակույտ 7 կմ հեռավորության վրա: 6Գ-IV	մ³	118,3	5500	650650
2	Փոսորակների փորման հողային աշխատանքներ ձեռքով: 6Գ-IV	մ³	13,2	7500	99000
3	Խճային նախապատրաստում:	մ³	2,67	7500	20025
4	Հիմքերի միաձույլ ե/բետոն. ա.պ. - 51.76 կգ/մ3: AI P=0.003 տ; A500C Ø12 P=0.5136 տ:	մ³	9,98	115000	1147700

5	Կանգնակների միաձույլ ե/բետոն. ա.պ. - 117.73 կգ/մ3: AI P=0.09874 տ; A500C Ø20 P=0.245 տ:	մ³	2,92	65000	189800
6	Ֆերմատակերի միաձույլ ե/բետոն. ա.պ. - 179.27 կգ/մ3; AI P=0.14068տ; A500C Ø14 P=0.1261տ. Ø12 P=0.0272տ:	մ³	1,64	65000	106600
7	Գրունտի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում:	մ²	34,5	3000	103500
8	Փոսորակների հետլիցք բուլդոզերով: Գրունտի տեղադրումը շերտերով ջրի լցաբախշումով և խտացում պնևմատոփանով:	մ³	104,1	3000	312300
9	Փոսորակների հետլիցք ձեռքով: Գրունտի տեղադրումը շերտերով ջրի լցաբախշումով և խտացում պնևմատոփանով:	մ³	11,6	5500	63800
				Ընդամենը III	2693375
	IV. Հենարաններ N3				
1	Խճային նախապատրաստում:	մ³	1,52	10000	15200
2	Հիմքերի միաձույլ ե/բետոն. ա.պ. -49.08 կգ/մ3: AI Ø8 P=0.0036 տ; A500C Ø12 P=0.5265 տ:	մ³	10,8	130000	1404000
3	Կանգնակների միաձույլ ե/բետոն. ա.պ. -296.26 կգ/մ3: AI Ø10 P=0.0531 տ; A500C Ø20 P=0.1484 տ:	մ³	0,68	125000	85000
4	Ֆերմատակերի միաձույլ ե/բետոն. ա.պ. - 179.27 կգ/մ3; AI Ø10 P=0.1407տ; A500C Ø14 P=0.1261տ. Ø12 P=0.0272տ:	մ³	1,64	120000	196800
5	Գրունտի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում:	մ²	30,1	2900	87290
				Ընդամենը IV	1788290
	V. Թռիչքային կառուցվածք				
1	Պողպատե տանգենցիալ հենարանային մասերի պատրաստում և մոնտաժում; ա) անշարժ -40x160x300 մմ. n=4 հատ. P=0.0562 տ; Ø36 L1=75 մմ. n=2 հատ. P=0.0012 տ:	հատ	2	1000000	2000000
2	Պողպատե տանգենցիալ հենարանային մասերի պատրաստում և մոնտաժում; բ) շարժական -40x160x300 մմ. n=4 հատ. P=0.0576տ:	հատ	2	1000000	2000000

3	Պողպատե (եռակցվող) թռիչքային կառուցվածքի պատրաստում և մոնտաժ կազմված ձևավոր և թերթավոր պրոֆիլներից. [40 åL=116.0 մ. P=5.6028 տ; [30 åL=99.04 մ. P=3.1495 տ; ∟100x10 åL=15.1 մ. P=0.20536 տ; -- 6 åL=23.2 մ. P=0.2137 տ; -- 8 åL=102.35 մ. P=0.7285 տ; -- 20 åL=22.28 մ. P=0.2984 տ:	տ	10,0895	1080000	10896660
4	Պողպատե բազրիքների պատրաստում և մոնտաժում. ծ 80x40x3 մմ åL=37.6 մ. P=0.1688 տ; ծ 70x30x3 մմ åL=1.84 մ. P=0.0791 տ; ծ 40x20x2.5 մմ åL=349.8 մ. P=0.7241 տ:	տ	0,9294	1000000	929400
5	Թռ. կառուցվածքի սալի միաձույլ ե/բետոն. ա.պ. – 102.52 կգ/մ3; AIII Ø12 P=0.3676 տ. Ø8 P=0.15524 տ:	մ³	5,1	150000	765000
6	Հետիոտնային անցման սոսնձվող ջրամեկուսիչ (ե/բետոնե սալի) թռիչքային կառուցվածքը H=0.8սմ (2 շերտ):	մ²	42,5	5000	212500
7	Հետիոտնային անցման ծածկի բազալտե սալիկներ H=3 սմ:	մ²	42,5	19000	807500
8	Դեֆորմացիոն կարերի իրականացում:	գմ	5,88	15000	88200
9	Վերևի պաշտպանիչ ծածկի պողպատե կոնստրուկցիաներ; ծ 60x40x3 մմ åL=125.2մ. P=0.5384 տ; ծ 40x25x3 մմ åL=59.84 մ. P=0.1592 տ; ծ 30x30x3 մմ åL=123.2 մ. P=0.2982 տ:	տ	0,9957	1000000	995700
10	Վերևի պաշտպանիչ ծածկի իրականացում պոլիկարբոնատե էլեմենտներից:	մ²	70	20000	1400000
11	Պոլիկարբոնատե էլեմենտներից ծածկի կցվանքների ծածկում ջրակայուն մածիկով:	մ²	3,4	5000	17000
12	Պողպատե թռիչքային կառուցվածքի մակերեսների բոլոր էլեմենտների ներկում (երկշերտ) նախնական ներկաստառումով:	մ²	129,7	4000	518800
				Ընդամենը V	20630760
	VI. Աստիճանավանդակներ				
1	Աստիճանավանդակների ստորին (եզրային) հիմնատակերի համար փոսորակներիի փորման հողային աշխատանքներ ձեռքով: 6Գ-IV	մ³	8	8000	64000
2	Խճային նախապատրաստում:	մ³	0,82	8000	6560

3	Աստիճանավանդակների վերջի հիմնատակերի միաձույլ ե/բետոն. ա.պ. – 32.38 կգ/մ3: A500C Ø12 P=0.068 տ:	մ³	2,1	140000	294000
4	Գրունտի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում:	մ²	7	3000	21000
5	Փոսորակների հետլիցք ձեռքով: Գրունտի տեղադրումը շերտերով ջրի լցաբախշումով և խտացում պնևմատոփանով: 6Г-IV	մ³	5	7000	35000
6	Աստիճանավանդակների միաձույլ ե/բետոն. ա.պ. – 144.2 կգ/մ3; AI P=0.1286 տ; A500C Ø16 P=1.092 տ. Ø12 P=1.0652տ. Ø10 P=0.6987տ:	մ³	20,633	160000	3301280
7	Ներդիր դետալների պատրաստում և տեղադրում; -10x140 մմ. L1=200մմ. n=112 հատ. F=3.136 մ2. P=0.2464 տ; Ø12 AIII. L1=250 մմ. n=448 հատ. P=0.0995 տ:	տ	0,3459	1000000	345900
8	Պողպատե բազրիքների պատրաստում և մոնտաժում. ծ 40x25x3 մմ åL=332.0 մ. P=0.8831 տ:	տ	0,8831	1200000	1059720
9	Հետիոտնային անցման ծածկի բազալտե սալիկներ H=3 սմ:	մ²	88,44	20000	1768800
10	Վերևի պաշտպանիչ ծածկի պողպատե կոնստրուկցիաներ; ծ 60x40x3 մմ åL=224.8 մ. P=0.9666 տ; ծ 40x25x3 մմ åL=365.04 մ. P=0.971 տ:	տ	1,9376	1100000	2131360
11	Վերևի պաշտպանիչ ծածկի իրականացում պոլիկարբոնատե էլեմենտներից:	մ²	95,4	20000	1908000
12	Ցինկապատ թիթեղից ջրհորդանների պատրաստում և տեղադրում. կտր. 1x540մմ. L1=1550 մմ. n=4 հատ. F=3.35 մ2. P1=6.675 կգ:	տ	0,0263	850000	22355
13	Պոլիկարբոնատե էլեմենտներից ծածկի կցվանքների ծածկում ջրակայուն մածիկով:	մ²	4,8	5500	26400
14	Աստիճանավանդակների բոլոր պողպատե էլեմենտների ներկում (երկշերտ) նախնական ներկաստառումով:	մ²	57,2	5000	286000
				Ընդամենը VI	11270375
	VII. Մայթեր կցորդումներում				
1	Հիմնատակերի համահարթեցման հողային աշխատանքներ ձեռքով: 6Г-IV	մ²	115,2	1500	172800
2	Եզրաշարերի իրականացման համար մայթերի փորման հողային աշխատանքներ ձեռքով: 6Г-IV	մ²	1,9	3000	5700
3	Եզրաշարերի միաձույլ բետոն մայթերի:	մ³	1,23	80000	98400
4	Բազրիքների և բազալտե եզրաքարերի իրականացման համար փոսորակների փորման հողային աշխատանքներ ձեռքով: 6Г-IV	մ²	3,8	3000	11400
5	Բազրիքների կանգնակների հիմնատակի միաձույլ բետոնի իրականացում:	մ³	0,97	80000	77600

6	Պողպատե բազրիքների պատրաստում և տեղադրում ներկաստառումով երկշերտ ներկումով: -60x40x3մմ. L=61.4մ. P=264.02կգ; -60x30x3մմ. L=93.2մ. P=356.96կգ; -40x30x3մմ. L=73.8մ. P=213.28կգ; -70x40x3մմ. L=2.0մ. P=12.38կգ:	գմ	49	19400	950600
7	Մայթերի բազալտե եզրաքարերի իրականացում (կտրվածք - 15x30սմ):	գմ	49	9000	441000
8	Մայթերի հատիկավոր ենթահիմքի իրականացում:	մ²	112,7	3500	394450
9	Մայթերի մանրահատիկ "Б" տիպի խիտ ա/բ $H_{փշ}$=3սմ:	մ²	112,7	3500	394450
10	Հենարանների և աստիճանավանդակների ներկում (ջրակայուն ներկ) նախնական ներկաստառումով:	մ²	209	1000	209000
11	NN1 և 2 հենարանների կանգնակների մակերևույթի ուղղահայած գծանշում:	մ²	26,4	1000	26400
12	Մետաղական թռ. կառուցվածքի մակերևույթի ուղղահայած գծանշում:	մ²	2	1000	2000
				Ընդամենը VII	**2783800**
				Ընդհանուրը	**53750310**
				Ընդհամենը՝չնախատեսված ծախսեր**	**800880**
				Ամբողջը*	**54 551 190**

Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%
Չնախատեսված աշխատանքների և ծախսերի համար պատվիրատուի կողմից կապալառուին տրամադրվող պահուստային միջոցները ենթակա են վճարման՝ վերջինիս կողմից հիմնավորող փաստաթղթերը (կատարողական ակտերի, հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող անձերի եզրակացությունների առկայության) ներկայացվելու դեպքում:

Հիմք՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշման 8-րդ հավելված

***Պայմանագրի կատարումը փուլային չէ և յուրաքանչյուր փուլի կատարումը ուղղակիորեն փոխկապակցված է պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ստացվելիք վերջնարդյունքի հետ:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025815
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Մավշին» ՍՊԸ
ՀՀ, Վայոց Ձորի մարզ,գ. Զառիթափ
ՀՎՀՀ 08911644
ՀՀ 11813008834700
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Տնօրեն՝ Մ. Մարգարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«31» «08» 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/17Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 2
ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ-ԳՐԱՖԻԿ
Մ10, Սևան-Մարտունի-Գետափ Կմ 123+500 (Գետափ բնակավայրի դպրոցի մոտ) վերգետնյա հետիոտնային անցման կառուցում

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
0	**Լաբորատոր փորձարկումներ**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 135 օր հետո
1	**Նախապատրաստական աշխատանքներ**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 5 օր հետո
2	**Հենարաններ**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 70 օր հետո
3	**Թռիչքային կառուցվածք**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 90 օր հետո
4	**Աստիճանավանդակներ**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 110 օր հետո
5	**Մայթեր կցորդումներում**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 130 օր հետո

	Ընդհանուր աշխատանքներ	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո**	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 135 օր հետո, բայց ոչ ուշ ֆինանսական միջոցներ նախատեսվելու տարվա նոյեմբերի 30-ը:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025815
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<Մավշին> ՍՊԸ
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Զառիթափ
ՀՎՀՀ՝ 08911644
ՀՀ 11813008834700
ԱյԴի բանկ ՓԲԸ

Տնօրեն՝ Մ. Մարգարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«31» «08» 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/17Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	Ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45221117/521	**Մ10, Սևան-Մարտունի-Գետափ Կմ 123+500 (Գետափ բնակավայրի դպրոցի մոտ) վերգետնյա հետիոտնային անցման կառուցման,**	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025815
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<Մավշին> ՍՊԸ
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ. Զառիթափ
ՀՎՀՀ՝ 08911644
ՀՀ 11813008834700
ԱՅԴԻ բանկ ՓԲԸ

Տնօրեն՝ Մ. Մարգարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/17Շ-1 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2022 թ. կնքված
***ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/17Շ-1** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն